


ՀԱՅՐԻԿ Տ.-ԱՎԱԳՅԵԱՆ

ԱՇԽԱԾ ՀԱՂԲԵՑ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱՆՔ






ՀԱՅՐԻԿ ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆ



ԱՇՈՏԸ ՀԱՂԹԵՑ

ԳԵՂՄՎԵՐՔ ԿՅՈՒՋԵՐՆ ՀԱՎԵՐԵՐՆ
ԿՅՈՒՋԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿԱԳՈՒՅՑՈՒՆ

ՕԵՐԵՎԱՆ—1929



~~10048 H 40224~~

Լույս և տեսնում Սոցդասզիսվարչության կից գործող Մանկական
կան գրականության Հանձնաժողովի հավանությամբ:

№ 45

ՊԵՏՑՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՄԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Հ. Ա. 933

Պ. Ա. 198

Տիրամ 2.000

Գրառեպվար Ա. 1710 ը.



ԱՇՈՏԸ ՀԱՂԹԵՑ

ՊԱՏՄՎԱՆՔ.

I

Աշոտի հայրը, Ոհանը, սաստիկ դժգոհ եր: Որ չեր մինի, վոր դրսից տուն գալիս չսկսեր գանգատվել իր բաղդից, լեզանակից և վերջապես ամբողջ աշխարհից:

Այդ որն ել, լեզար ճառելուց հետո, դարձավ վորդուն ու ասաց.

— Եյ, Աշոտ, քեզ եմ ասում, թե դու ել են մյուս տղաների պես խելքդ տվիր քամուն ու եղ նոր աղաթներով զնացիր, լավ իմացիր, վոր դու իմ տղան չես... յես լավ գլխի յեմ ընկեր թե ձեզ են դպրոցում ինչ են սովորցնում: Առաջ եր, վո՞ր...

— Առաջ լավ ելին սովորցնում,—զգուշ հայցը Աշոտը:

Նա հորից վսիսնում եր, վորովհետև բարկանալիս յերբեմն ծեծում եր վորդուն:

— Առաջ, առաջ աշակերտը, վոր կզնար դպրոց, տերեի պես կդողար ուսուցչից... մեծ թիքան ականջը կմնար, թե վոր մի ձեն հաներ... հիմա յե, վոր ընկեր աշակերտ, ընկեր ուսուցիչ... առ, ինչ ընկեր, ինչ բան:

Կիրակի յեր: Աշոտը մտահոգ դուրս յեկավ տանից: Նա յիրկար թափառում եր աշնան գույներով ներկված բախտաներում:

Այս հինգերորդ տարին եր, վոր նա դպրոց եր զնում:

Նա հաճախ համեմատում եր հոր պատմածները հիմիկ-
վա հետ և համոզվում եր, վոր հիմի լավ ե:

Հենց պիտի իրեն ծեծեն, վոր լավ սովորի... կատ
վոր տառծուն, յա տերտերին չի հավատում, իրեն ինչ
դնաս դբանից:

— Ասավածս վորն ե, տերտերս վորն ե: Մի տերտեր
ունեն զյուղում սժաթին ել նայելու չի, մի մարդավարել
խոսք ասելու շնորհք ել չունի... ել գրա լավը վմբն ե...

Նա ընկել եր խորը, շատ խորը մտածմունքների մեջ,
յերբ մի խումբ յերեխաներ, գպրոցի աշակել տներից,
լցվեցին բախչան ու վազեցին դեպի Աշոտար: Նրանք պինու
աղմկում ելին: Մառերից թափած չոր տերեները խշաշաւմ
ելին նրանց գոտների տակ:

— Ել, Աշոտ, ել, ինչ ես քիթդ կախել, — գոռաց դեռ
հեռվից Գառպարը, նրա դասընկերն ու հարեանը:

— Ել, փիլիսոփա Աշոտ, — գոռաց Գարեգինը, Յ. ըդ
խմբի մի աշակերտ, — եդ ինչ ես թաղվել եդ խաղաների
մեջ (չոր տերեւ):

— Բահ, բահ, — գոռագոռալով շրջառատեցին նրան
բոլորը, թվով 10 հոգի, — ելի ով գիտի՝ ինչ խելոք բաների
մտախն ե միտք անում մեր Աշոտը:

— Ել, ասավածավախ Աշոտ, — բղավեց մեկը, Սու-
րենը, վորը լուրջ խոսելու սովորություն չուներ և շատ
անգամ իր ծամածուություններով բարեկացնում եր ըն-
կերներին: Դրա համար նրա անունը դրել ելին «Զանզալ»,
վոր կզշում ե ու ել պոկվելու հնար չկա: — Ինչ ես
մեն-մենակ նստել, քիթդ կախել: Ասածուն հավատո՞ւմ եռ:

Նա բոլորովին մոտեցավ Աշոտին ու սկսեց լեզու-
հանել նրան:

Աշոտը բարկացած հրեց նրան ու կանգնեց վոտի:
— Մառթղ քեզ քայի, փսլնքոտ «Զանզլալ», — զուաց նա, — վոտից զլուկս բոռ կոպեկ չարժես, ուրիշին ել շեմ համառում:

— Ինչ անենք, վոր Աշոտը աստվածավախ ե, — ասաց Դուրգենը, բարձրահասակ յերկարուկ դեմքով մի տղա ու կանգնեց Աշոտի կողքին: — Բա վոր աստված չկա, ես աշխարհը, ես յեղած-չեղածը ո՞վ ե ստեղծել:

— Թյու, — թքեց Գասպարը, — ամոթ ել չի անում իր եղ յերկար բոլով, եսպիսի բաներ ե խոսում, — տո չմռոտ «տիրացու», բա ել ինչի՞ համար ես ֆիզիկա, քիմիա, բնագիտություն սովորում...

— Տո, թողեք թող աղոթք անեն դրանք, — քթը մի կողմ շուռ ավեց Սուրենը, — նրանց ձեռքից ուրիշ ինչ կդա:

— Տո, աղոթք ասողը դու յմս, թե յես, — զոռաց համբերությունից դուրս յեկած Աշոտը, — են որը գու չեցիք, յեկեղեցում մոմ ելիք վառում, խաչամբույյը ելիք տալիս: Խոսեն եղի եղ մյուսները, դո՞ւ ով ես:

Տղաները հրհուացին, իսկ Սուրենը կարմրեց մինչև ականջների ծայրը:

— Դե լավ, լավ, — ասաց Գարեգինը, — թարկեք դրանք, յեկեք մի խաղ խաղանք, կիրակի յե, ել ինչ պիտի անենք: Եերեխաներն սկսեցին մի ժիր ու աղմկալի խաղ:

II

Յերեկոյան մութ եր, յերբ Աշոտը յեկավ տուն: Հայրը, մայրն ու իրենից փոքր քույրը՝ Աստղիկը նստել ելին բաց թոնրի կողքին փոած քեշաների վրա, թոնրի շրթին: Զանոն ըստ սովորականին իր անբաժան գուլպան

եր գործում։ Հայրը թիկն եր տվել սլունին ու տերողորմայի հատիկներն եր շրխկացնում։ Խոկ Աստղիկը, Գ տարեկան, վառվուն աչքերով մի աղջիկ, սլունի վրա կախ տված փոքրիկ ծխոտ լամպի աղոտ լուսի տակ թերթում եր մի հաւերեն ալրենարան, վորը նրա մալրը՝ Զանոն իր տնտեսած փողովն եր գնել աղջկա համար։ Նա դեռ կարդալ չգիտեր։ Ուսուցիչը քանի անդամ խորհուրդ եր տվել Ունին, աղջկան դպրոց ուղարկել, բայց նա համառում եր։

— Աղջկա ինչին ե պետք ուսումը, տղերքի հետ գնա նստի մի նստարանի վրա։ Ինչ աբուռով պիտի մեծանա, թող տանը Աշոտը ինչքան գիտի՝ սովորցնի, են ել հերիք ե։

Եսպես եր ասում Ոհանը,

Աշոտը բերեց ոռւսերեն գիրքն ու սկսեց սերտել իր դասը։

— Աշնա, — կամաց բոթեց նրա կողքը Աստղիկը, — ես ինչ ե, մի հալա տիս, ես մարդը վար ե անում։

Աշոտը զբաղված եր և չեր լսում։

— Աշնոտ, — նորից փսխսաց Աստղիկը, — դե ասա ե՞։ Աշոտը դժգոհ հրեց նրան արմունկով ու շարունակեց կարդալ։

— Աղջի ինչ ես ծեթ ու ծամոն դառել, — թնդաց հայրը, — թող դասը սովորի։

Նա կայծքարով վառեց չիբուխը։

— Յես ել եմ ուզում սովորել, — կմկմաց աղջիկը։

— Զե՛, մի դարդ ու ցավ ես ուզում անել։ Սովորել... ինչիդ ե պետք, դու աղջիկ ես, չսովորես ել՝ կլնի։

— Ընչի, թող աղջիկս ել գնա սովորի, — ասաց Զա-

նոն, միքիչ վախվիսելով ամուսնուց, — բա աղջկան ուսում
պետք չի, են ել խելքը զլիսին, աստծու ստեղծած բան-
դան չի...

— Ե-Ե՛, քեզնով վոր ըլնի, այսարհ պիտի զլիսի վրա
կանգնի... են արուռով, ուստալ աղջկերքին չենք տեսել:
Հրեն կարճ խելքովդ, գնացել գիրք ես առել, դե թող
սովորի, ելի:

— Ե՞ս, անաշեն, դու վոր մի բան քոքեցիր, ել թոքա
թե ձեռ կքաշես:

— Հա, բա, — ծաղրաբարյերկարացրեց Ոհանը, — վոր
քեզնով ըլի, դու ել կզնաս դպրոց, կսովորես:

— Բախտավոր զլուխս, — հառաչեց Զանոն:

— Հրեն, միքանի աղջկերք սովորում են, — ձայն տվեց
Աշոտը, գրքից զլուխը բարձրացնելով, — ի՞նչ կա վոր:

— Հա, բա, սովորում են, եզուց կտեսնենք՝ նրան-
ցից ինչ դուրս կդա:

Լուսթյուն տիրեց: Աստղիկը զլուխը կախ՝ թերթում
եր գիրքը անընդհատ թրջելով մատը լեզվով ու նայում
նկարներին, իսկ Աշոտը քչփշալով սովորում եր իր դասը:

— Եգուց ցախի պիտի եթանը, — ձայն տվեց
Ոհանը, — հազրվի, վոր գաս հետո:

Աշոտի մարմնով սարսուռ անցավ:

— Բա զպրոցը, — հարցրեց նա խղված ձայնով:

— Դպրոցը հո՛ չփախավ, ինչ արել ե չի արել, մեկ
որն ե արել:

— Ախը ինչու յեր մեկ որ: Դասերը վոր սկսվել են,
եղ ել քանի՛ անգամ բացակաել եմ դպրոցից: Ուսուցիչն
ել բարկանում ե, ասում ե՝ դուրս կանենք:

— Դե հիմի վհնց ես հրամայում, ցախն ե մեզ շատ
հարկավոր, թե քո մի որվա դասը:

Զանոն նորից ծանր ախ քաշեց:

— Ախը ես տնաշենի մարդը վոր ուզի, յանի առանց նրան ել կբերի ցախը, — մտածում եր Զանոն, բայց միայն ախ եր քաշում ու չեր համարձակվում բան ասի:

Կես ժամ չանցած՝ Ուանը ծխած չիբուխը դատարկեց թոնըի մեջ ու դնելով քիսալի (քսակ) մեջ, կախեց սյունի վրա խփաց հատուկ մեխից:

Այդ նշան եր, վոր արդեն ժամանակն ե պառկելու:

Զանոն պահեց իր ձեռագործը, անկողինները փաեց, և ընտանիքը շուտով քուն մտավ:

Աշոտն անկողնում յերկար չեր կարողանում քնել: Նա աշխատում եր մի յելք գտնել այդ դրությունից: Հայրը շատ եր նեղում իրեն:

Ի՞նչ անի: Լավ չելք լինի՝ մի անգամից հակառակվել ու չլսել այլես հորը, չթողնել յերեսն ի վայր դպրոցը, դասերը, արսպիսի դատարկ բաների համար:

Բայց ի՞նչպես. վոր շատ հակառակվի, հայրը կծեծի: Ծեծից ել այնքան չեր վախենում, ինչքան մոր լաց ու կոծից: Մայրը այդպիսի դեպքերում միշտ սիջամտում եր և միշտ ել նրան բաժին եր ընկնում հոր կոպիտ վարժունքից:

Թունն ավելի զորեղ եր, քան մտքերը: Աշոտը քնեց:

III

Առավոտը հայր ու վորդի գնացին ցախի:

Մարերում ձյուն կար: Ուշ աշնան պաղ արել նոր եր բարձրանում սարի հետեից:

Ճախի գնացողները շատ եյին: Մեծերը յետ մասցին ու խոսելով գալիս եյին: Իսկ փոքրերն առջևից եղերի հետ եյին գնում:

— Հը՛, Աշոտ, — ասաց իշխ վրա բազմած մի հաստ
ու պինդ տղա՝ ուռած թշերով, — դպրոցը վորտեղ ես թողել,
ցախի յես գնում... պահ, պահ, եղ կարդացվորին տեսեք:
Նրա անունը Սմբատ եր, Հայրը շատ եր փորձել
նրան դպրոց ուղարկել, բայց նա մեկ յերկու տարի գնալ-
գալուց հետո հրաժարվեց և այլես չգնաց: Հազիվ հազ նա
պրաճանաչ եր դարձել: Նա բոլոր աշակերտներին իրեն
թշնամի յեր համարում: Թե ինչու չկարողացան պահել
նրան դպրոցում — հայտնի չեք:

Ուսուցիչներն ասում եյին, վոր անուշազիր ե, իսկ
ինքն ասում եր, թե առանց կարդալու յել ինքը շատ լավ
յոլա կցնաւ: Գյուղում նրա նման մլքանիսը կային:

Աշոտը սուս եր արել:

— Հը՛, չինի պրաֆեսոր ես դարձել, — շարունակեց
Սմբատը, — ուռել, փքվել ես, ել մարդու բանի տեղ չես
գնում, համ: — Այդ խոսքերի հետնա ուղցրեց իր առանց այն
ել ուռած թշերն ու հաստ պոռշները, վորոնց համար ըն-
կերները նրան «Բդո» մականունն ելին տվել:

— Ե՛, ընչի գիրք չես բերել հետըդ, — ասաց մի ուրիշը, —
իշխ վրա լավ կկարդալիր... ա... բ... գ... — և նա պատկե-
րացրեց թե ինչպես են կարդում, ձեռքերը դեմ ան ելով
իր միակ աշքին:

— Ա՛ս, մռ ես լրագիրը, յերեկվանն ե, շատ հին
չի, կարդա, բացատրիր առաջարկեց Սմբատը, գլխարկից
մի հին, պատռութած լրագրի կտոր հանելով և պարզե-
լով դեպի Աշոտը:

Յերեխաները հընուացին:

— Տն, «Բդո», — ասաց Աշոտը բարկացած, ու հըեց
նրան, — հալիդ մնա, ե՛:

«Բդո» ասելիս՝ Սմբատը սաստիկ վիրավորվում եր-նա պինդ հայոյեց Աշոտին, վորը նույնպես պատասխանեց:

Աշոտն ու Սմբատը փոխադարձ վիրավորանքներ ելին հասցնում իրար, իսկ մլուսները հրհում եյին ու ավելի գրգռում նրանց:

Յերեխաների խումբը մեծացավ նրանցից յերկու հոգի Աշոտի դասընկերներից ելին և նույնպես բացակայել եյին դպրոցից:

— Հեյ, ջան,—գոչեց Սմբատը, վոր ըստ յերկույթին ընկերների մեջ բավական ժողովրդականություն եր վայելում, —պրաֆեսորները շատացան:

— Դե սովորեցեք, տեսնենք, —գոռաց մի չեչոտ տղա, աչքերը ճպճպացնելով, —ե՞ս, փափախներդ դեն զցեք գլխըներդ բացե՛ք, պրաֆեսորները դաս են տալիս...

Անասելի ծիծաղ բարձրացավ:

— Վայ «թնթոռշ» (չեչոտին «թնթոռշ» ելին ասում), —ապրես դու, հա, —խրախուսում եյին տղաները ու հրհում:

Աշոտի ընկերներից մեկը, Մուկուչը գլխարկը խեց չեչոտի գլխից ու խփեց գետին: Գլխարկի տերը սկսեց անասելի հայողանքներ թափել նրա վրա: Մուկուչը պատասխանեց: Հայոյանքն ընդհանրացավ: Մերթընդմերթ, հայոյանքների տարափի միջից լսվում ելին մականուններ, վորոնք տղաները սիրում ելին իրար տալ՝ «Բալթա», «Կմճո», «Մաճե», «Քնձոռոտ», և այլն, նրանք միքանիսն ել կպցըին մեկ-մեկու, լերը մեծերը վրա հասան: ու բաժանեցին նրանց:

Կեսորից հետո, Աշոտն իր հո

յերկու իշխն բարձած՝ վերադառնում ելին տուն։ Մանր մտքերը պաշարել ելին նրան։ Նրա գրութլունը անելանելի յեր։ Մի կողմից իր ընկերները ծաղրում ելին նրան դըպ-ըսոցում, մյուս կողմից ել իրեն ծանոթ գյուղի չսովորող յերեխաները, յերբեք հարմար առիթը բաց չելին թողնում ձեռ առնելու նրան, փօրովհետև գիտելին, թե հայր ու վորդի ինչ հարաբերութլունների մեջ են։

Նա կսկծից վոչ հաց կերավ, վոչ ել զըքի յերես նայեց և ժամանակից շուտ մտավ անկողին։

Թունը չեր տանում, նա իրեն շատ թշվառ եր զգում։

Ինչ յերեսով նա պիտի յերես իր ընկերներին, ուսուցիչներին։ Ինչպես պիտի դաս պատասխանի։

Քանի միտք եր անում, այնքան համոզվում եր, վոր մեկ որ պիտի դուրս դա հոր դեմ։

Գալով այդ վորոշմանը, նա իրեն զգաց անտեր, խեղճ ու ինքն իրեն այնպես պիստ խղճաց, վոր ել չկարողացավ իրեն պահել ու այնպես լաց յեղավ, ինչպես վաղուց չեր լաց յեղել։

Զանոն գլուխը տխուր շարժեց, իսկ Ուանը ուսերը թոթովեց։

Աստղիկն արդեն քնել եր։

Յերեսում եր, վոր վորդու լացը ազդել ե Ուանի վրա։ Նա լավ գիտեր, վոր իր Աշոտը այնքան ել հեշտ լաց լինողներից չի և վոր այդ բանի համար ինքն ե մեղավոր։ Բայց նա շատ միտք չարեց դրա համար և շուտով հանգիստ խոըմփացնում եր անկողնի մեջ։

Աշոտը դեռ չեր հանգստանում։ Զանոն մոտեցավ նրա անկողնին ու սկսեց կամաց շոյել ու քորել վորդու գլուխը։ Մոր փաղաքշանքը հանգստացրեց Աշոտին։ Նրա քունը տարավ։

IV

Ուսուցիչը այս անգամ ել նկատողություն արեց
Աշոտին և հայտնեց, վոր լեթե եսպես շարունակվի, հարցը
պիտի մանկավարժական խորհրդին դնեն և դպրոցից հեռա-
ցնեն:

Աշոտը լերկար մտածեց այդ բանի վրա և վորոշեց
այս անգամ, ինչպես ել լինի, չհնազանդվել հորը:

— Ինչ ուզում ե՞ թող անի, — վճռեց նա, — չեմ դնա-
ու չեմ գնա:

Անցավ միքանի որ: Մի որ ել, լերը Աշոտը վերադար-
ձավ գպրոցից, մայրը ասաց, վոր վարժապետը նրա
յեղբորփորդու՝ Գրիգորենց տանն ե, և մարդ եր ուղար-
կել ու կանչել Ոհանին իր մոտ:

— Կլինի չիլինի, իմ մասին են խոսում, — մտածեց
Աշոտը:

Աստղիկն ըստ իր սովորության դիմավորեց յեղբորը
ու խնդրեց, վոր իրեն դաս տա:

— Թող հալա հաց ուտենք, Աստղո ջան, — ասաց մայրը
ու հաց ցցեց:

Յերեկոյան Աշոտը նստել եր քրոջ կողքին ու բացա-
տրում եր նրան տառերի նշանակությունը:

Ուշ եր արդեն, յերը հայրը յեկավ տուն:

Ուսուցիչն ու Գրիգորը շատ բան եյին ասել նրան,
բայց այդ բոլորը քիչ եր ազդել նրա վրա: Նա հաստատ
հավատացած եր, վոր ուրիշ կերպ չի կարող վարվել և
յեթե ուզում ե իր տղան լավ մարդ դառնա, պետք ե
աշքը հանի, խրատի, ուղիղ ճանապարհի վրա դնի:

Նա մի ակնարկ ձգեց յերեխաների վրա ու ծանը
նստեց իր սովորական տեղը, սյունի տակ:

— Աւշի, վերցրու դցի են կողմ,—ասաց նա իր սովորական հեգնական յեղանակով,—թող տղան բերի իր դասերը սովորի, քանի անդամ եմ ասել... հենց, վոր զու յել դրել կարդու չսովորես, աշխարհ տակն ու վրա կլինի: Զանո՞—կանչեց նա, —եզուց շաբաթ ե, հազիվ մի ազատ որ ե, մեր Դանելենքն ել գնում են վաճք, չի՞ լինի, վոր մենք ել գնանք: Մի զիշեր կմանք, կիրակի իրիկուն կդանք: Ծրաերն ընկնուե են, ել հետո դժվար կլինի:

— Բնչի՞ չե, գնանք,—ասաց Զանոն, —մատադն ել լաղարեց, գնալը ամենից լավ է:

— Դե՛, Աշոտ, պատրաստվի, վոր զու ել գաս, բեր տրեխ-մըեխտ սարքի՞:

Աշոտը վաղուց եր սպասում այդ քանին և վճռել եր դիմադրել:

Նա դողդոջուն, հազիվ լսելի ձախով, վորի մեջ սակայն լսվում եր մի վճռական շեշտ, արտասանեց: —

— Յես վանք չեմ զնա:

— Վճնց թե չես գնա, —խալթվածի նման գոչեց հայրը:

Նա իր ականջներին չեր հավասում: Հսկի չեր կարծում, վոր իր աղան կարող ե հոր կամքից դուրս գալ:

— Վճնց թե չես գնա, —կրկնեց նա, —եդ քանի՞ գլխանի յես, վոր եղակես ես ասում:

— Յես վանք չեմ գնա, —գլուխը կախ, հոնքերի տակից հորը նայելով, կրկնեց Աշոտը:

— Կզնաս, վիզդ ել կյերկարի: Բնչի՞, դու ի՞նչ ես, վոր մեր պապենական աղաթները վատի տակ ես տալիս: Այ քեզ տղամարդ, աֆֆերըմ... Դե՛, դե՛, դե՛, վեր կաց տրեխներդ բեր սարքիր, քեզ ասում եմ:

— Զեմ գնա, —համառեց Աշոտը:

— Վանց չես գնա, տո հարամզադա, յերբվանից ե, վոր զլխիդ տեր ես դառել: Քեզ ասում եմ ախըր՝ վեր կաց:

— Դե լավ, տնաշեն, հո հենց հիմի չգնացինք, սատանի ձին ես հեծել,—մեջ ընկավ Զանոն,—տղայիս պիտի սրտաճաք անես:

— Վեր կաց, քեզ ասում եմ,—գոռաց Ոհանն ու փայտը բարձրացրեց:

— Աւան, դե լավ,—ճշաց Զանոն ու թռավ դեպի տղան. — Ջրհանդամն ըլի դպրոցն ել, վանք եթալն ել...ը՛հ, տղայիս հո չես սպանի:

— Դենը գնա, թե չե փետը քո մեջքին կդա: Եղապես ես արել, վոր հարազատ տղան իր հորը բանի տեղ չի դնում... նալլաթ չար սատանին, հա:

Միքանի վարկյան փայտը մնաց ողի մեջ և պատրաստվում եր իջնել սկզբում Զանոյի մեջքին, վոր գրկել եր Աշոտին, ապա անհնազանդ վորդու:

Յեվ այդ միքանի վարկյանում Ոհանի զլխով շատ բաներ անցան: — Ի՞նչ անի... խփի թե չե... իսկ յեթե հանկարծ ուսուցչի ասածը ճիշտ յեղավ, ինչ կլինի իր վերջը: Զե՞ վոր ինքն իսկապես փաած, վերջացած մարդ ե... եղ տղան չի, վոր նրա հուկան ե ու նրա ապավենը ծերության որերին: Առանց նրան ինքն ինչ կլինի...

Ոհանի թափը թուլացավ:

Նա փայտը գցեց մի կողմ:

Յերբեք այդպիսի դժվար դրության մեջ չեր յեղել նա:

Բայց չեր ուզում դեռևս ընկճվել:

— Դե լավ,—ասաց նա, սպառնալից նալելով վոր.

գուն, — եզուց թե դու մեզ հետ չեկար, են ժամանակ յես
քո հալը կտեսնեմ:

— Յարար, աստված, — ախ եր քաշում ու վշշում
Զանոն, — ես ինչ մեղք ե, ես ինչ զուլում ե, ի՞նչ ես
թաղին (վորսկան շուն) յել, ընկել տղայի հետել, աչքիդ
մի բան կա... Քո աղան ուրիշներից ինչնվ ե պակաս,
վոնց վոր խալիսի տղերքը, ենպես ել քոնը... վոր վանք
չգնա՝ ել ինչ ե,

— Սուս, սուս, անզգամ, ձենըդ... — բղավեց Ոհանը,
սակայն ավելի մեղմ քան առաջ:

Նա շատ եր ընկճվել, բայց նրա մեջ դեռ մնացել եր
մի վորոշ հույս, վոր Աշոտը առավոտը կփոշմանի իր
արածի համար ու կհնազանդվի հորը:

Աշոտը, գլուխը կախ, նստել մտածում եր:

Ինչպես անի, վոր եզուց վանք չգնա: Նա գիտեր,
վոր հայրը միանզամից չի զիջի:

Պետք եր մի բան անել:

Ցեվ նա վճռեց առավոտը շուտ վեր կենալ ու գնալ
տանից:

V.

Ցերք Ոհանն առավոտը գնաց եշերին խոտ բերելու,
Աշոտը ծլկվեց տանից:

Նա եշերի առաջ խոտ գցեց, չուխալի փեշերը թափ
տալով՝ դուրս յեկավ գոմից, նայեց այս ու այն կողմ,
չգտավ Աշոտին:

— Տղան վեր ե կացել, բա ուր ե, — մտածեց նա: —
Եշերը փալանի, մինչև մատաղը ճամբու կդնեմ,

Աշոտը չկար:

Ոհանը գնաց Դանելենց տուն, իր հետ տանելով մտադրը, — մի գիրուկ սիրուն դառ, — ու այնտեղից ճամբու դրեց:

Յեկալ տուն, սկսեց բեռները սարքել:

Զանոն նույնպես պատրաստության մեջ եր: Աման պիտի վերցներ, գլաւ և ալին, և տեղաշոր մի զիշեր վանդում անցկացնելու համար:

— Ի՞նչ յեղավ եդ տղան, — փնթփնթում եր Ոհանը, — վեր ե կացել, պուլս վերցրել, վոր չհանդամն ե գնացել լակոտը:

— Տո, յես ի՞նչ իմանամ, — վշվշում եր Զանոն, — ըստ եդ թարսությունը մվ գիտի ի՞նչ սե ու սուդ բերի մեր գրուխը... խեղճ տղաս անհաց, անջուր յելել ե, տնից գնացել եր հոր դարդից:

Աստղիկը ուրախ եր վանք գնալու համար:

— Բա Աշմար, մայրիկ, — հարցնում եր նա, բա Աշոտը չի գալու:

— Բա վոր չեկավ ի՞նչ անենք, — անհանդիստ հարցրեց Զանոն:

— Ի՞նչ պիտի անենք, — կոպիտ մըրթմըրթաց Ոհանը, — մատաղ ես խոստացել, մատաղն ել ուղարկել եմ Դանելենց մատաղի հետ առավոտը շուտով: Զի գա, չառ ու ջհանդամը գա...

— Յա, բա յես իմ տղին վժնց թողնեմ խալխի դըռները գնամ:

— Ե՛ս, հիմի ել դու կ մնանեցիր պոչիդ վըմ: Հարյուր բարեկամ ունես, չի կարմղ մեկի տանը մի կտոր հաց ուտել, մինչև մեր գալը: Յես լավ գիտեմ եդ ում պլաններն են, Ախպորդ տղի, Գրիգորի ճանկն ընկած չլիւ-

Ներ, հո հիմի լել եղ ովինը չեր հանի դլուխներս։ Նրանց
տանն և շնթռկել, հիմի, ել փրտեղ կլի վոր։

Նա բարկացած եր, անիծում եր աղային, բայց մի
կողմից սաստիկ վախ եր ընկել սիրալ։

Ընտաճիքը գլխիկոր ճանապարհ ընկավ եշերն առաջն
արած։

Աշոտը Գրիգորինց տանն եր և ալգտեղից դպրոց
գնաց։

Դպրոցում նա վարիչին պատմեց իր վանք դնալուց
հրաժարվելու մասին։ Ուսուցիչը գովեց նրան։

— Լավ ես արել, — ասաց նա, — յեթե այս անգամն ել
գու այդ բանն անելիք, զժվար թե բեզ հնարավոր լինել
դպրոցում պահել։ Զանգը տված ե, գնա դասարան։

Այդ որն Աշոտն իրեն շատ թեթև եր զգում։ Գրի-
գորի և ուսուցչի հավանությունը նրան թե եր տվել, կար-
ծես մի մեծ բեռ ընկել եր նրա ուսերից։ Ամեն ինչ և
ամեն վոք իր շըջապատռում նրան լավ եր թվում։

Բոլորի հետ կատակներ եր անում, քըքջում, խոսա-
ցնում սրան նրան։

— Եդ վճնց ե, — ասաց նրան Գարեգինը դասամիջո-
ցին։ — եսոր բերանդ կարմըր խնձոր չի մանում, ասես թե
աշխարհը տվել են քեզ։

— Ե՛, Աշոտը հա պիտի լաց ըլլի, վոր քո քեֆը գմ, —
ծաղրաբար ասաց Գասպարը, — Աշոտ, լաց, Աշոտ, գե շուտ
լաց, վոր Գարեգինի քեֆը գտ։

— Զե, ախագեր, հերիք ե՝ ինչ լաց եմ յեղել, — ծի-
ծադեց Աշոտը, — ել լացելու միտք չունիմ։

Նրա խոսքերում մի խորհրդավորություն կալ։ Բո-
լորն զգացին ալդ բանը։



Ա 40274
10-78

Առւրենը, վոր նույնպես այդտեղ եր, և նրա հետ շատերը, մոտեցավ, ըստ իր սովորությանը ու մոտիկից ուղիղ նալեց նրա յերեսին:

— Պահ, եսոր քո սֆաթին լույս ե վառվուժ, աստվածավախ Աշոտ,—ասաց նա:

Աշոտը բռունցքը մոտեցրեց նրա քթին ու ասաց.—

— Մեկ ել վոր դու ինձ աստվածավախ ես ասել, ալ «Զանզալ», տեսնում ես բռունցքս, քթիցդ արյուն կառնեմ, հա:

Առւրենը հետ քաշվեց:

Բոլորի հետաքրքրությունը վառվել եր:

Աշակերտները խռնվել եյին Աշոտի շուրջը: Աշոտին հրհրելով Գուրգենը մոտեցավ նրանց:

— Ընդ, «տիրացուն» (Գուրգենի մականունը) լեկավ, հիմի Աշոտը կխոստովանի,—գոչեց մեկը:

— Եդ ինչ թաղա բաներ ես ասում, Աշոտ, — զարմացած հարցնում եյին այս ու այն կողմից,—Ել, ինչ եպատահել, դե հա մի պատմի:

— Եդ ինչ դու յես ասում, քեզ փիլիսոփա յել չասենք,—ձայն տվեց Գասպարը:

— Դե շնոտ, դե շնոտ,—աղմկուժ եր խումբը:

Աշոտը, վոր ուրախ եր հաղորդելու ընկերներին իր հերոսության մասին, շատպելուց խոսքերը կուլ տալով, պատմեց գլխի յեկածը:

Բոլորն ուշադրությամբ լսում եյին:

— Ապրես, ախաղեր. տղամարդ ես,—ասաց Գուրգենը: Նա նախանձում եր ընկերոջը, վորովհետև ինքն ել նույն դրության մեջ եր:

— «Տիրացու», տեսնենք դու լերը եսպիսի տղամարդություն կանես,—նկատեց Գարեգինը:

— Ա՛յ քեզ տղամարդություն, — խոսեց Գասպարը, — նմբ պիտի Աշոտն եղ բանն աներ:

— Ուրիշների վրա մի գնա, — առարկեց Գարեգինը, — մեր բոլորիս գործն ուրիշ ե, մեզ ստիպող չկա, իսկ Աշոտի հերը, բոլորս դիտենք, ինչ ոյին ե հանում գլուխը:

— Բա վճնց կանես, վոր հերդ չթողնի՝ տուն գնաս, — բղավեց մեկը հետեւի շարքերից:

— Բաժանվի հորից, — ասաց միուսը:

— Թալանի հորը, — ծիծաղեց լերորդը:

— Աշոտի ձեռից ինչ ասես կգա, ախպեր, — ասաց Գուրգենը:

— Թառլան ե, թառլան:

— Տղերք, ուռուա, Աշոտին ուռուա, — խեղկատակի նման գոռաց մեկը:

— Ուռուա, ուռուա՝ ա՝ ա՝, — գոռացին բոլորը:

— Տղերք, սուս, մի բան ասեմ, — գոռաց Սուրենը՝ Բոլորը լռեցին:

— Արեք հիմի լել մի նոր անուն գնենք Աշոտին:

— Ի՞նչ, ի՞նչ անուն:

— Անվախ Աշոտ:

Այդ կոչումն անասելի հրճվանք պատճառեց ամենքին:

Նրանք սկսեցին կանչել. — «Անվախ Աշոտ, անվախ Աշոտ»:

— Դե վոր եղակես ե, — բարկացավ Աշոտը, — հիմա դու կտեսնես, վոր յես խեղապես անվախ եմ:

Նա հարձակվեց ծամածովող Սուրենի վրա ու բռնեց նրա ոձիքից:

Տղերքն իրար անցան ու միջամտեցին:

Զանգը հսչեց և նրանք ցըվեցին դասարանները:

Գիշերն Աշոտը քնեց Գրիգորենց տանը:

VI

Մյուս որն, յերբ Աշոտը լերեկոլան կողմ գնում եր իրենց տուն, նրա ուրախ տրամադրությունը չքայել եր: Սատիկ անհանդիստ եր:

Ի՞նչ կասի հայրը:

Բայց, ինչ ել վոր լինի, նա չպիտի տեղի տա. զըժվարն արված ե, մնում ե որանից հետո յել պինդ կանդ-նել:

Անքան եր նա տարվել իր մտքերով, վոր մոտից անցնող Սմբատը հազիվ կարողացավ գրավել նրա ուշադրությունը:

— Եդ վժրաեղից ես գալիս, պրաֆեսոր Աշոտ, — հարցնում եր Սմբատը պոռշներն ու թշերն ուսցնելով:

— Տհ, ե՛, տն, քեզ հետ չեմ... խելքդ թռել ե... բայս չեմ իմանում, վոր շատ կարգացողի խելքը կպահասի:

— Դենը գնա, յե՛, դու յել, «Բդո», — թափահարեց ձեռներն Աշոտը՝ կանգ չառնելով, — իմ հալը, քո քեֆը:

Եյդ խոսքերն այնպիսի տօնով եյին ասված, վոր նույնիսկ «Բդոյի» նման մի լեթված տղա ազդվեց ու զարմացած հետ քաշվեց:

— Պահո՞-ո՞-ո՞,—ասաց նա նրա հետեկից, — Աշոտն ու-ուել, փքվել ե, տրաքեց, հա, վայ-վայ, Աշոտը տրաքեց... հեյ, հեյ, հոյ-հոյ... հեյ:

Ու սկսեց ինչ վոր յերդ յերգել:

Աշոտն ըսկի հետ ել շնայեց:

Նա սրտատըռի մտավ բակը:

Բակում, տան պատի մոտ եշերը, վորոնց վրայից նոր եյին, բեռները վերցրել հանդիստ խոտ ելին ուտում, Շունը,

պատշգամբի մոտ պառկած, գլուխը վեր բարձրացրեց,
մտերմաբար պոչը շարժեց, կարծես բարեկիս լիներ:

Շունչը բռնած՝ Աշոտը տան դուռը բաց արեց ու
ներս մտավ:

Հայրը նստել եր իր սովորական տեղը, սկսնի տակ:
Նա նոթերը կիտած՝ միտք եր անում ու ծխում եր իր
ժիբուխը:

Զանոն տեղաշորն եր դարսում մյուս սյունի տակ:

Հայրը չնալեց վորդու կողմը:

Աստղիկը վազեց յեղբոր առաջ:

— Ե՞ս, Աշոտ, ընչի՞ մեզ հետ չեկար,—ասաց նա ու-
րախ ուրախ: Ենքան լավ եր վանքը գնոյ, գուռնա, մա-
տաղ, քեֆ, իլ ինչ ասես՝ չկար: Ինձ համար սալ կան-
ֆետ առանք, այ, տես,—նա ցուց տվեց, հանելով գրա-
նից, թղթի մեջ փաթաթած կանֆետի կտորը.—մի տես,
քեզ համար եմ պահել...

Տեսնելով յեղբոր այլայլված դեմքը, նա շփոթվեց և
ապա նայեց հորը, հետո մորը ու սուս նստեց թօնքի կող-
քին, քեչայի վրա:

Վոչ վոք վոչինչ չխոսեց: Կարծես ամեն մեկն զգում
եր, վոր խոսքերով զործին ողնել անհնար ե, և ամենից
լավը լուելն ե:

Զանոն, վոր սկզբում վախենում եր, թե Ո՞ւանը պի-
տի հարձատկի տղալի վրա, տեսնելով նրա արտաքուստ
հանգիստ դեմքը, հանդստացավ և սկսեց ընթրիքի պատ-
րաստություն տեսնել:

Աշոտը վերցրեց իր զբքերն ու, նստելով քրոջ կողքին
փոքձեց դաս սովորել: Կարդում եր ու վոչինչ չեր հաս-
կանում:

Կարծես մի տեսակ պահանջ եր զգում նայելու հոր
յերեսը:

Քանի գնում եր, այդ պահանջն ուժեղանում եր
նրա մեջ:

Ուժ չունենալով դիմանալու, նա վերջապես նայեց
հորը:

Հայրը հոնքերի տակից ալժմ դիտում եր վորդուն:
Ծուխը բոլորովին պատել եր նրա ճերմակած զլուխը
և ծխի ամպի սիջից Աշոտը նկատեց ինչ վոր նոր արտա-
հայտություն հոր աչքերի մեջ.—նրանք ալես առաջվա-
պես խիստ չերին: Ինչ վոր անսովոր տաքություն կար
նրանց մեջ:

Աշոտը սիրա առավ, ավելի ուշադիր նայեց հորը:
Այս անգամին հայր ու վորդի շիտակ նայեցին իրաբ:

— Սովորում ես,—հարցրեց հայրը հանգիստ, տիրու-
թյան շեշտը ձայնի մեջ:

— Հա, —հազիվ արտասանեց Աշոտը:

Մի տաք, ալբող զգացմունք բռնել եր նրա սիրտը:
Ուրախ եր նա ար զգացմունքին՝ հոր հայցըն եր վա-
ռել նրա մեջ այդ կրակը:

— Մի բան կարդա՞յ լսենք, —շարունակեց հայրը:

Ուրախությունից շունչը կտրված, Աշոտը կարդաց
առաջին պատահած վոտանավորը, սկզբում անհաստատ
ու խղված ձայնով:

Բայց քանի գնում, նրա ձայնն ուժեղանում եր ու-
զբնդում արծաթի նման: Նա կարդում եր, —

«Բարձր, մռայլ ու սե

յեկեղեցի յերկնաբերձ...»

հբեցի նման տձե,

հազած մեռելի հանդերձ,
ցցված ե վեր
դարեր իվեր։
Յեվ դողում են ողի մեջ
յերկար ու անվերջ
յելևեջները ժամերդի,

տաղտուկ անցյալի փշրանքները դժնի...
նման անթիվ չղջիկներին սկաթե,
ճախրում են ոդում հե ի հե.
յերբեմն հզոր,
հիմա թույլ, ազոր։

Բայց ահա նոր կյանքով լի
մի ձայն ահեղ ու անհաղթ
ճեղքում ե հյուծված ձայնը մեռելի,
ճեղքում ե, հայածում դժբաղդ
փշրանքներն անցյալի։

Դա պիոների թմբուկն ե զընզում,
իր յերգն ե յերգում...

Յեվ ձայնի յելևեջները թարմ ու ահեղ,
մուրճի նման հատու ու ձայնեղ,
հարվածում, վշշում են անգութ,
մահվան տագնապով լի
փառած ու անոգուտ
ըեկորներն անցյալի։

Թշերը կարմրած, աչքերը վառ, ածուխի նման, վերջա-
ցը Աշոտն ու նալեց հորը։

Հայոը խնդրեց բացատրել միքանի խոսքեր։
Աշոտը բացատրեց։

Հայրը ինդքեց մի անգամ ել կարդալ սկզբից մինչև
վերջ։

Աշոտը կրկնեց վոտանավորը։

Հայրը լուռ եր։

Կնճիռները բարդվել ելին ճակատին և նա անշարժ
ու ծերացած, նմանում եր մի հինավուրց ժայռի, իսկ ճա-
կատի կնճիռները՝ ժայռի ճեղքածքներին, վոր առաջացնում
են նրա մեջ քամին ու ցուրտը։

Զանոն նույնպես լսել եր ուշադրությամբ և սիրով նա-
յում եր վարդում, վոր եսպես ճարտար կարդաց վոտանավորը։

Նո զգում եր, վոր իր ամուսնու մեջ ինչ վոր փափո-
խություն և կատարվել և անչափ ուրախ եր դրա համար։

— Լավ են գրել, — ծանր արտասանեց Ռհանը, — Եղ-
պես ել պիտի լինի։ Զոռով ինչ լինի անել։ Թուրքական
առածն է ասում, — «մեկը չմեռած՝ մյուսը չի ծնվի»։
Մերը պրծավ... Են վոնց և ասմամ — «անցյալի փշրանք-
ները»... Ճիշտ է ասում։

Նա մտախոն նորից լցրեց չիրուխը ու սկսեց ծխել։
Բոլորը լուռ ելին։


— Աշտու, — նորից ձայն տվեց հայրը, — հիմի վոր
Աստղիկին ուղարկենք դպրոց, կվերցնեն։

— Բա վճնց չե, — ուրախ գոչեց Աշոտը, — վարիչն
ասում եր՝ ինչնու չի դպիս։

— Կենիկ, — դարձավ նո Զանովին, — աղջկա ձեռ ու
վոտը քորի, թող դպրոց գնա.. Մեր բանը պրծել ե...
Ճիշտ են ասում, ախալեր, սելավի առաջը կտրել կընի։

Աստղիկը, վոր արդին անկողին եր մտել, ուքայտու-
թյունից քիչ մեաց դուրս թռչի վերմակի տակից։

— Զան լի, լի, — ասում եր նա, — յես դպրոց կզնամ,
Աշոտի պես կարդալ կսովորեմ, ջան լի, լի...
—



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220040274

(104.)

A ii
4025

Ա. ԱՎԱԿՅԱՆ

Աշոտ պատճեն



ԳԻՒՆ Ե 18 ԿՈԴ.

